Հավելված 6
ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0001* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԼԱՆԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0001-2

ք. Հրազդան «20» հունվար 2020 թ.

**«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ**, ի դեմս տնօրենի ժ/պ **ԱՐՄԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **,,ՍԱՄՆԱՆ,,ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է ---------- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրության աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ____2___ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __2_ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **496500 (Չորս հարյուր իննսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ 0 դրամ ԱԱՀ-ն:**[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

---

[18] Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս .ներառյալ ԱԱՀ-նե բառերը հանվում են:

...այմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք ...ելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված ...արի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[20] Եթե պայմանագիրը կնքվել է ,Գնումների մասինե ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

...ության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ...որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

---

[22] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[23] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[24]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | Պայմանագրի կողմ |
| Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մ.Բաղրամյան | <<ՍԱՄՆԱՆ>> ՍՊԸ |
| թաղ., Պուրակային 32 | ք. Երևան, Աջափնյակ |
| 077-448141 | թաղամաս, Հասրաթյան 8/10 |
| Հայբիզնեսբանկ ՓԲԸ | ՀՎՀՀ 01272957 |
| 11500966078460 | <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ, |
| 03017721 | Մետաքս մ/ճ |
| | Հ/Հ 163218023543 |
| Տնօրենի Ժ/Պ Արմեն Հախվերդյան | Տնօրեն Մանվել Հայրապետյան |
| --- | --- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[24] Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ ., իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներրե բառերը փոխարինելով .նե բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

*Հավելված N 1*
*« 20 » հունվար 2020 թ. կնքված*
*ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0001-2 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 10 | 22451240 | Անձնական քարտ A4 Խրոմ | հատ | 70 | 3500 | 50 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | *Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ* |
| 15 | 22451240 | Դեղատոմս սովորական A5 օֆսեթ սահմանված է ՀՀ կառավարության 2017թ. Նոյեմբերի 9-ի N 1402.-Ն որոշման հավելված N 3 | հատ | 1.7 | 85000 | 50000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | *Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ* |
| 16 | 22451240 | Դեղատոմս կապիրովկայով A5 օֆսեթ2 թերթ | հատ | 11 | 110000 | 10000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | *Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ* |
| 32 | 22451240 | Մարդատար մեքենայի ուղեգիր A5 օֆսեթ | հատ | 2.5 | 2000 | 800 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | *Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ* |
| 38 | 22451240 | Ուղեգիր միևնույն բժշկական կազմ.-ում լաբ.-գործիք. Ախտորոշիչ հետազոտության A5 օֆսեթ | հատ | 1.7 | 153000 | 90000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | *Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ* |
| 40 | 22451240 | Ռենտգեն ծրար 38 սմ x 45 սմ անվանական | հատ | 100 | 20000 | 200 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | *Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով* |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 41 | 22451240 | Ռենտգեն ծրար 35 սմ x 30սմ անվանական | հատ | 90 | 18000 | 200 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 47 | 22451240 | Քարտ կանխարգելիչ պատվաստումների Ձև 063 A5 օֆսեթ 4 թերթ | հատ | 15 | 15000 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 49 | 22451240 | Քարտ ստոմատոլոգիական մեծահասակ 6 թերթ A5 խրոմ | հատ | 55 | 11000 | 200 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 50 | 22451240 | Պահանջագիր ձև Պ-21 A5 օֆսեթ | հատ | 2.5 | 1250 | 500 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 51 | 22451240 | Փոխանակման քարտ Կանանց կոնսուլտացիա A5 օֆսեթ | հատ | 2.5 | 2500 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 52 | 22451240 | Մարզադպրոցի սանի առողջության գնահատման ամփոփաթերթ | հատ | 4.5 | 2250 | 500 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 55 | 22451240 | Փոխանակման քարտ ծննդաբերական, բաժանմունքի A5 օֆսեթ | հատ | 2 | 2000 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 58 | 22451240 | Տուբ . լաբորատոր ուղեգրի | հատ | 2 | 2000 | 1000 | Ք.Հրազդա | Աշխատանքների կատարվում է |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ձև ՏԲ 05-06 A5 օֆսեթ | | | | | ն, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 59 | 22451240 | Արտակարգ տեղեկատվություն սուր վարակիչ հիվանդության ձև 058/ Y A5 օֆսեթ | հատ | 5 | 500 | 100 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 62 | 22451240 | Ախտահյուսվածքաբանական ախտորոշման ուղեգիր A5 օֆսեթ | հատ | 2 | 2000 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 64 | 22451240 | Ներդիր ինտենցիվ խնամքի բաժանմունք ընդունվող նորածինների համար A4 օֆսեթ | հատ | 7 | 1400 | 200 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 65 | 22451240 | Ծննդատնից նորածնի տեղափոխման էպիկրիզ A4 օֆսեթ | հատ | 7 | 700 | 100 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 70 | 22451240 | Ինֆեկցիոն բաժ.-քի Ուղեգիր նմուշավորված կենսաբանական նյութի հավելված N4 A4 օֆսեթ | հատ | 7 | 1050 | 150 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 72 | 22451240 | Կանխարգելիչ համազննումների / սկրինինգի / տվյալները A5 | հատ | 2 | 2000 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսած մինչև 25.12.2020թ |
| 73 | 22451240 | Տուբերկուլյոզ. Հիվանդի կոնտակտավորի A5 բժշկական քարտ / 6 թերթ/ 4-թերթ միջուկ// | հատ | 45 | 13500 | 300 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակայի ն 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| | 22451240 | Ընդհանուր շճաբանական ախտորոշիչ լաբորատորիա արյան անալիզ A5 օֆսեթ 1/2 | հատ | 2 | 3000 | 1500 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| 90 | 22451240 | Բիոքիմիական արյան անալիզ A4 օֆսեթ | հատ | 1.8 | 12600 | 7000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| 92 | 22451240 | Կլինիկական լաբորատորիա , կղանքի անալիզ A5 օֆսեթ | հատ | 2 | 2000 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| 93 | 22451240 | Շճաբանական լաբ. Արյան անալիզ A5 օֆսեթ ½ Հեպատիտ A,C | հատ | 2 | 2000 | 1000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| 95 | 22451240 | Արյան անալիզ վերլուծիչով A4 օֆսեթ | հատ | 1.8 | 27000 | 15000 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| 96 | 22451240 | Մեզի անալիզ կոմբինա 10 A5 օֆսեթ | հատ | 2.5 | 1250 | 500 | Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Աշխատանքների կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով Պայմանագրի հաստատումից հաշված 21-րդ օրացույցային օրից սկսաց մինչև 25.12.2020թ |
| | | | | | 496500 | | | |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*******Ապրանքի մատակարարումը պետք է կատարվի պատվերի սահմաններում,***

********Ապրանքի մատակարարումը ք. Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեում***

*...անքը պետք է լինի չօգտագործված:*

** Տեխնիկական բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ<br>Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32<br>077-448141<br>Հայբիզնեսբանկ ՓԲԸ<br>11500966078460<br>03017721<br>Տնօրենի Ժ/Պ Արմեն Հախվերդյան<br>----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | Պայմանագրի կողմ<br><<ՍԱՄՆԱՆ>> ՍՊԸ<br>ք. Երևան, Աջափնյակ թաղամաս, Հասրաթյան 8/10<br>ՀՎՀՀ 01272957<br><<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ, Մետաքս մ/ճ<br>Հ/Հ 163218023543<br>Տնօրեն Մանվել Հայրապետյան<br>----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 20 » հունվար 2020 թ. կնքված*
**ՀԲԿ--ԳՀԱՇՁԲ -- 20 / 0001-2** *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Վճարումները *ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի* | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 496500 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Մ.Բաղրամյան
թաղ., Պուրակային 32
077-448141
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500966078460
03017721
Տնօրենի Ժ/Պ Արմեն
Հախվերդյան
---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Պայմանագրի կողմ
<<ՍԱՄՆԱՆ>> ՍՊԸ
ք. Երևան, Աջափնյակ
թաղամաս, Հասրաթյան 8/10
ՀՎՀՀ 01272957
<<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ,
Մետաքս մ/ճ
Հ/Հ 163218023543
Տնօրեն Մանվել
Հայրապետյան
---
/ստորագրություն/
Կ.Տ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2020թ հունվարի 20-ին կնքված ''ՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-20/0001 -2 ,, գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք.Հրազդան ,, հունվար,, 2020թ

,,Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ-ն, այսուհետ ,,Գնորդ,, ի դեմս տնօրենի ժ/պ Արմեն Հախվերդյանի մի կողմից և ,, Սամնան,, ՍՊԸ-ն , այսուհետ ,,Վաճառող,, ի դեմս ըներության տնօրեն մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև ,, Կողմեր,, , հիմք ընդունելով 20.01.2020թ.. ''ՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-20/0001 -2 ,, կնքված պայմանագրի / այսուհետ ՝ Պայմանագիր/ 8.15 կետը, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1Պայմանագրի 8.15 կետին համապատասխան հաստատել պայմանագրով նախատեսված դեղորայքի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ,,Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ | ,,Սամնան,,ՍՊԸ |
| Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | Ք.Երևան, **Հասրաթյան 8/10** |
| Բանկ- Հայբիզնեսբանկ | **Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Մետաքս մ/ճ** |
| h/h 11500966078460 | Հ/Հ **163218023543** |
| ՀՎՀՀ 03017721 | ՀՎՀՀ **01272957** |
| Տնօրենի ժ/պ Ա.Հախվերդյան | Տնօրեն Մ. Հայրապետյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված 1
Հաստատված է
« 20 » հունվարի 2020թ կնքված
N ՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-20/0001-2
Գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | Ընդամենը |
| | Դեղորայք | 125800 | 258900 | 345680 | 496500 | 496500 |

Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**
,,Հրազդանի Բժշկական
Կենտրոն,,ՓԲԸ
Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ.
Պուրակային 32
Բանկ- Հայբիզնեսբանկ
h/h 11500966078460
ՀՎՀՀ 03017721
Տնօրենի ժ/պ Ա.Հախվերդյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
,,Սամնան,,ՍՊԸ
Ք.Երևան, **Հասրաթյան 8/10**
**Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Մետաքս մ/ճ**
Հ/Հ **163218023543**
ՀՎՀՀ **01272957**

Տնօրեն Մ. Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<< 20 >> << հունվարի >> 2020 թ. կնքված
,N ՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-20/0001-2

*ծածկագրով*

*գնման պայմանագրի*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| ՀՀ | Ապրանքի Անվանումը | Տեխնիկական բնութագիր | Նախատեսվում է գնել 2020թ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Անձնական քարտ A4 խրոմ | Անձնական քարտ A4 խրոմ | | | | | 50 |
| 15 | Դեղատոմս սովորական A5 օֆսեթ սահմանված է ՀՀ կառավարության 2017թ. Նոյեմբերի 9-ի N 1402.-Ն որոշման հավելված N 3 | Դեղատոմս սովորական A5 օֆսեթ սահմանված է ՀՀ կառավարության 2017թ. Նոյեմբերի 9-ի N 1402.-Ն որոշման հավելված N 3 | | | | | 50000 |
| 16 | Դեղատոմս կապիրովկայով A5 օֆսեթ2 թերթ | Դեղատոմս կապիրովկայով A5 օֆսեթ2 թերթ | | | | | 10000 |
| 32 | Մարդատար մեքենայի ուղեգիր A5 օֆսեթ | Մարդատար մեքենայի ուղեգիր A5 օֆսեթ | | | | | 800 |
| 38 | Ուղեգիր միևնույն բժշկական կազմ.-ում լաբ.- գործիք. Ախտորոշիչ հետազոտության A5 օֆսեթ | Ուղեգիր միևնույն բժշկական կազմ.-ում լաբ.- գործիք. Ախտորոշիչ հետազոտության A5 օֆսեթ | | | | | 90000 |
| 40 | Ռենտգեն ծրար 38 սմ x 45 սմ անվանական | Ռենտգեն ծրար 38 սմ x 45 սմ անվանական | | | | | 200 |
| 41 | Ռենտգեն ծրար 35 սմ x 30սմ անվանական | Ռենտգեն ծրար 35 սմ x 30սմ անվանական | | | | | 200 |
| 47 | Քարտ կանխարգելիչ պատվաստումների Ձև 063 A5 օֆսեթ 4 թերթ | Քարտ կանխարգելիչ պատվաստումների Ձև 063 A5 օֆսեթ 4 թերթ | | | | | 1000 |
| 49 | Քարտ ստոմատոլոգիական մեծահասակ 6 թերթ A5 խրոմ | Քարտ ստոմատոլոգիական մեծահասակ 6 թերթ A5 խրոմ | | | | | 200 |
| 50 | Պահանջագիր ձև Պ-21 A5 օֆսեթ | Պահանջագիր ձև Պ-21 A5 օֆսեթ | | | | | 500 |
| 51 | Փոխանակման քարտ Կանանց կոնսուլտացիա A5 օֆսեթ | Փոխանակման քարտ Կանանց կոնսուլտացիա A5 օֆսեթ | | | | | 1000 |
| 52 | Մարզադպրոցի սանի առողջության գնահատման ամփոփաթերթ | Մարզադպրոցի սանի առողջության գնահատման ամփոփաթերթ | | | | | 500 |
| 55 | Փոխանակման քարտ ծննդաբերական բաժանմունքի A5 օֆսեթ | Փոխանակման քարտ ծննդաբերական բաժանմունքի A5 օֆսեթ | | | | | 1000 |
| 58 | Տուբ . լաբորատոր ուղեգրի ձև ՏԲ 05-06 A5 օֆսեթ | Տուբ . լաբորատոր ուղեգրի ձև ՏԲ 05-06 A5 օֆսեթ | | | | | 1000 |
| 59 | Արտակարգ տեղեկատվություն սուր վարակիչ հիվանդության ձև 058/ Y A5 օֆսեթ | Արտակարգ տեղեկատվություն սուր վարակիչ հիվանդության ձև 058/ Y A5 օֆսեթ | | | | | 100 |
| 62 | Ախտահյուսվածքաբանական ախտորոշման ուղեգիր A5 օֆսեթ | Ախտահյուսվածքաբանական ախտորոշման ուղեգիր A5 օֆսեթ | | | | | 1000 |
| 64 | Ներդիր ինտենցիվ խնամքի բաժանմունք ընդունվող նորածինների համար A4 օֆսեթ | Ներդիր ինտենցիվ խնամքի բաժանմունք ընդունվող նորածինների համար A4 օֆսեթ | | | | | 200 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծննդատնից նորածնի տեղափոխման էպիկրիզ A4 օֆսեթ | Ծննդատնից նորածնի տեղափոխման էպիկրիզ A4 օֆսեթ | | | | | 100 |
| 70 | Ինֆեկցիոն բաժ.-քի Ուղեգիր նմուշավորված կենսաբանական նյութի հավելված N4 A4 օֆսեթ | Ինֆեկցիոն բաժ.-քի Ուղեգիր նմուշավորված կենսաբանական նյութի հավելված N4 A4 օֆսեթ | | | | | 150 |
| 72 | Կանխարգելիչ համազննումների / սկրինինգի / տվյալները A5 | Կանխարգելիչ համազննումների / սկրինինգի / տվյալները A5 | | | | | 1000 |
| 73 | Տուբերկուլյոզ. Հիվանդի կոնտակտավորի A5 բժշկական քարտ / 6 թերթ/ 4-թերթ միջուկ// | Տուբերկուլյոզ. Հիվանդի կոնտակտավորի A5 բժշկական քարտ / 6 թերթ/ 4-թերթ միջուկ// | | | | | 300 |
| 82 | Ընդհանուր շճաբանական ախտորոշիչ լաբորատորիա արյան անալիզ A5 օֆսեթ 1/2 | Ընդհանուր շճաբանական ախտորոշիչ լաբորատորիա արյան անալիզ A5 օֆսեթ 1/2 | | | | | 1500 |
| 90 | Բիոքիմիական արյան անալիզ A4 օֆսեթ | Բիոքիմիական արյան անալիզ A4 օֆսեթ | | | | | 7000 |
| 92 | Կլինիկական լաբորատորիա , կղանքի անալիզ A5 օֆսեթ | Կլինիկական լաբորատորիա , կղանքի անալիզ A5 օֆսեթ | | | | | 1000 |
| 93 | Շճաբանական լաբ. Արյան անալիզ A5 օֆսեթ ½ Հեպատիտ A,C | Շճաբանական լաբ. Արյան անալիզ A5 օֆսեթ ½ Հեպատիտ A,C | | | | | 1000 |
| 95 | Արյան անալիզ վերլուծիչով A4 օֆսեթ | Արյան անալիզ վերլուծիչով A4 օֆսեթ | | | | | 15000 |
| 96 | Մեզի անալիզ կոմբինա 10 A5 օֆսեթ | Մեզի անալիզ կոմբինա 10 A5 օֆսեթ | | | | | 500 |

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

,,Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ

Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32

Բանկ- Հայբիզնեսբանկ

h/h 11500966078460

ՀՎՀՀ 03017721

Տնօրենի ժ/պ Ա.Հախվերդյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

,,Սամնան,,ՍՊԸ

Ք.Երևան, **Հասրաթյան 8/10**

**Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Մետաքս մ/ճ**

**Հ/Հ 163218023543**

**ՀՎՀՀ 01272957**

Տնօրեն Մ. Հայրապետյան

/ստորագրություն/

Կ.Տ